

ՂԱԶԱՆԶԻ ԳԻՒՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ

Որովհետեւ Շահերաւի հայկաթօն բեւառնեւ արձանագը
րութեան մեկնութեան առթիւ խօսեցանք Ղազանըի Գիւղի
Բոլորակ արձանագրութեան վրայ, պատշաժ էր համարիւք
ներկայացընել անոր ալ բնագիրն հանդերձ մեկնութեամբ:




Այս արձանագրութիւնն ալ է միջ ալոց գտած է գեր.
Մեւրութ արքեպ. Սմբատեանց, 1886ի նոյեմբեր ամսոյն, Արմա-
ւի Ղազանքի Գիւղին մէջ:

Արձանագրութեան բառականն նմանութիւնը Ձազանքի
Գիւղին մէջ երևան ելածին հետ կասկածի տեղի տուած էր
Գեր. Սմբատեանց Արքազանին, թէ մի գուցէ երկուքն ալ նոյն
ըլլան, և մասնաւոր նամակով այս մասին տեղեկութիւն ուզած
էր Սեղմէ: Մենք ժամանակին պատասխանեցինք մեր Գեր. Բարե-
կամին, և այսօր «Բանասէր»ի միջոցաւ կը ծանօթացընենք նոյնը
մեր հետաքրքիր պատուական ընթերցողաց:

Ղազանքիի արձանագրութիւնն, ինչպէս վերի (էջ. 102)
պատկերին կը տեսնուի, շատ մաքուր պահուած է, և որ
կը պատկանի մի և նոյն Մենուշեան Արգիշտիի արքային:


Ահա-ասիկ անոր ընթերցումն ու թարգմանութիւնը.


 Ան Խաւ- քի - շի - շի

Խաղդեան աստուածոց

 - Լ - - - - շի - շի

Զօրութեամբ

 Գ Կի - Գի - Իշ - Իշ - Զ

Արգիշտի

 Գ Մե - նա - ու - ու - Իշ - շի - Զ

Մենուշեան

ԿԱՆԳՆԵՅ

Կ - Կ - Կ

Կանգնեց :

Ուրեմն ամբողջութեամբ կը նշանակէ .

« Խաղաղեան աստուածոց զօրութեամբ »

Արգիշթիշ Մենուանի կանգնեց :

Արձանագրութիւնս չըսեր թէ և Արգիշթիշի « կանգնած »
հաստատութեան տեսակն , Բայց Չահրիարի արձանագրու-
թեան Բաղդաստութեամբ կընանք հետեւցընել ' թէ նոյն
տեսակ ' տուն ' մը կամ պալատ մը լինելու է այս ալ :

4.8.6.